

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Նորի արարումը միշտ էլ դժվար է: Այդպես է նաև շուկայական՝ ազատական տնտեսական համակարգի պարագայում: Առավել ևս, որ այդ արարման համար մեզ հատկացված ժամանակն անհամեմատ կարճ է, քան պահանջվել էր հասարակություններին նախկինում՝ զարգացման բնական ընթացքի դեպքում: Գնալով ակնհայտ է դառնում, որ կոմունիստական գաղափարներով կառավարվող հասարակությունների և դրանց ժողովուրդների տնտեսական, սոցիալական, քաղաքական և գաղափարաբանական ժառանգությունից ազատագրվելու փորձերը նորագույն ժամանակների երևի թե ամենադրամատիկ և հակասական արձագանք գտնող երևույթներից են:

Համոզված եմ, որ անգամ «Մեծ դեպրեսիայով» և առհասարակ տնտեսական տատանումներով չհետաքրքրվող մասնագետներին ևս ինչ-որ չափով հայտնի է Ռուզվելտի «Նոր կուրսի բովանդակությունը»: ԱՄՆ տնտեսությունը խոր ճգնաժամից դուրս բերելու նպատակով նախագահ դառնալուց հետո՝ 1932 թ. սկսած, հակառակ ուղղափառ կարծրատիպերի, նա իրականացրեց տնտեսական կյանքին միջամտելու արդյունավետ քաղաքականություն: Ընդ որում, վերջինիս անհրաժեշտությունը, սկզբունքները և եղանակները միայն չորս տարի հետո պետք է տեսականորեն հիմնավորվեին Քեյնսի կողմից: Ուստի անքննելի է, որ տնտեսությունն աշխուժացնելու քայլերը ամերիկյան կառավարությունը իրականացնում էր՝ առաջնորդվելով փորձով և ինտուիտիվ ընկալումներով և ոչ թե տեսական կաղապարների վրա հիմնվելով: Հավանական է, որ ոչ բոլորն են ուշադրություն դարձրել ժամանակային այս խզմանը: Այս անհերքելի իրողությունը հարկադրում է համաձայնվել, որ «քեյնսյան հեղափոխություն» կոչվածը առավելապես վերաբերում էր մարդկանց աշխարհընկալմանը, քան իրական տնտեսական գործընթացներին:

Փաստորեն, գրեթե նույն կամ նմանատիպ իրավիճակն է հաստատվել նաև ներկայումս: XX դարի 60-ականներին սկիզբ առած և երկու հազարամյակների սահմանագլխին ակնառու դարձած համակարգային վերափոխումները՝ անցումը վարչահրամանային տնտեսությունից շուկայականին, առավելապես առարկայական հիմքեր ունեն: Այսինքն՝ դրանք չեն ծագել ավել կամ պակաս չափով տեսականորեն ձևակերպված լինելու պատճառով, առավել ևս կախված չեն եղել առանձին երկրների՝ թեկուզ ամենահզոր, մարդկանց ու խմբերի ցանկություններից ու կրքերից: Այդ գործընթացների առարկայական, քաղաքական ու անձնական դրդապատ-

ճառների՝ գոյություն ունեցող բազում մեկնաբանությունները անշուշտ էլի են լրացվելու: Եվ դրանք, ամենայն հավանականությամբ, իրականացվելու են, ինչպես եղել է, կա, ու դեռ պետք է լինի, երեք գաղափարաբանական հիմքերի վրա՝ պահպանողական, առաջադիմական, արմատական-մերժողական: Դա և՛ տրամաբանական է, և՛ պատմականորեն ապացուցված: Այսպես, ավանդական հասարակության վերափոխման ժամանակաշրջանում ձևավորվեցին հետևյալ գաղափարաբանական հարթակները՝ **պահպանողական**, որը հիմնավորում էր առկա համակարգի արդարությունը՝ կրոնական շղարշով պարուրված, որպես «սկզբնական հրաման ու օրենք», և բավարար արդյունավետությունը թե՛ սոցիալական և թե՛ տնտեսական տեսանկյուններից, ու մատնացույց անում զարգացման այլ ուղիների անհնարինությունը: **Նորարարական** (անվանենք դա ազատական), որը կառուցված էր սկզբունքորեն նոր, իր գագաթում և հիմքում մարդու ազատությունը ունեցող արժեհամակարգի վրա, և **արմատական-ազգայնական**: Վերջինս, ըստ էության, ատելով անցյալը և մերժելով ներկան, յուրաքանչյուր ազգի համար իրեն առանձնահատուկ՝ հասարակական-տնտեսական կառուցվածքի անհրաժեշտության գաղափարն էր առաջ քաշում: Ընդ որում, դա արվում էր բաղձալի «պայծառ» ապագայի նկատմամբ մեծ խանդավառությամբ ու անհամբերությամբ՝ հարկադրելով ևս մեկ անգամ համոզվելու, որ «հայրենասեր-ազգայնականությունը» ստահակների վերջին հանգրվանն է:

Տնտեսագետ լինելու հանգամանքը չէ, որ մեզ թելադրում է հասարակական առաջընթացի հիմքերը փնտրել տնտեսական պայմանների փոփոխության մեջ: Իհարկե, նույնիսկ տնտեսագետների շրջանում կան հետազոտողներ և անգամ ուղղություններ, որոնք տնտեսականը ստորադասում են պատմական, քաղաքական, մշակութային, հոգեբանական և այլ գործոնների, օրինակ՝ պատմական դպրոցը: Սակայն, մեր համոզմամբ, հատկապես տնտեսագիտության բնագավառում նման երևույթը իրականության զգացմունքային ընկալման հետևանք է: Վերջինս երևի պայմանավորված է ինչպես տվյալ երկրի անհարթ զարգացման առանձնահատկություններով, այնպես էլ սնապարծ ցեղակրոնությամբ պարտադրվող գաղափարներով: Ամբողջապես համամիտ ենք Ա. Մարշալի տեսակետին. «Համաշխարհային պատմությունը ձևավորող երկու հզոր ուժերն են կրոնը և տնտեսությունը: Կրոնական շարժառիթները ուժեղ են տնտեսականից, սակայն դրանց ներգործությունը հազվադեպ է տարածվում այնպիսի լայն կենսոլորտի վրա, ինչպիսին տնտեսականն է»¹:

Ժամանակակից քաղաքակրթության ամենաարմատական փոփոխությունը, ըստ մեզ, քրիստոնեության հաստատումն էր, որը, սակայն, իր առջև «հին աշխարհը մինչև հիմքերը քանդելու» խնդիր չէր դրել: Քչերը կվիճարկեն, որ քրիստոնեությունը եկավ եղածն իր դարն ապրածից ազատելու, եղած դրականի վրա նորը, ավելի կատարյալն ու առաջադիմականն ավելացնելու համար: Բոլորովին էլ պատահական չէր, որ դիմելով իր աշակերտներին՝ Հիսուսն ասել է. «Մի կարծեք, թե ես եկա օրենքը կամ մարգարեներին ավերելու: Ավերելու չեկա, այլ լրացնելու»²: Սա է «օրեն-

¹ Маршалл А. Принципы политической экономии. Т. 1. М., 1983, с. 56.

² Նոր Կտակարան, Ավետարան ըստ Մատթեոսի, 17:

քի» ճշմարտությունը, որը նույնչափ բացատրելի պատճառներով միշտ էլ անտեսվել է բոլոր կարգի ու տրամաչափի հեղափոխականների կողմից: Թվում է, թե թիկունքում ունենալով անցյալի բովանդակ փորձն ու հարուստ տեսական գիտելիքների հսկայական պաշար՝ նախկին կոմունիստական հասարակությունները պետք է որ առանց էական դժվարությունների իրականացնեին անցումը պլանայինից շուկայական տնտեսության: Սակայն իրականությունը և այն լուսաբանող փաստերը հակառակն են վկայում:

Առաջին հայացքից հնարավոր է անհեթեթություն թվա այն հանգամանքը, որ Լատինական Ամերիկայի երկրների համար 1989 թ. կազմված «Վաշինգտոնյան համաձայնությունը» (ԱՄՆ կառավարության, ՅԲ և ԱՄՅ դիրքորոշումն արտահայտող) դրվելու էր կոմունիստական վարչակարգերից ազատագրված երկրների տնտեսությունների վերափոխման ծրագիր-հանձնարարականների հիմքում: Բացի այդ, հանձնարարականները ձևակերպելու և ընդունելու ժամանակահատվածում նույնիսկ ամենահամարձակ և հակակոմունիստական կարծրատիպերով առաջնորդվող հետազոտողները և քաղաքական գործիչները չէին կարող ենթադրել ԽՍՀՄ մոտալուտ վախճանը: Իսկ որ սովետական և «սոցիալիստական ճամբարի» այլ երկրների տնտեսությունները իրենց կառուցվածքով, ուստի և կենսագործունեությամբ էապես տարբեր էին թիրախային երկրներից, ակնհայտ էր:

Ի տարբերություն հասարակագիտության մյուս բնագավառների՝ տնտեսագիտության մեջ միակարծությունը ավելի հազվադեպ է հաստատվում, քանի որ չկան հստակ կանոններ, որոնք հնարավորություն կտան տարբերելու ճշմարիտ տեսությունը սխալականից, համապատասխանող՝ անհարիրից: Եվ բնական է, որ հիմնականում հրամանային սկզբունքներով կարգավորվող Լատինական Ամերիկայի տնտեսությունների շուկայացման կանոնների ժողովածուն՝ կազմված անգլիացի տնտեսագետ Ջոն Վիլյամսոնի կողմից, պետք է որ արժանանար խիստ քննադատության՝ հատկապես իրագործումն ուղեկցող տեսական կորուստներն ու սոցիալական աղետները նկատի ունենալով: Մյուս կողմից այդ կանոնները անհրաժեշտ էր ընդունել որպես «շուկայացման ընդհանուր ծրագիր» և դրանով առաջնորդվել՝ իհարկե հաշվի առնելով գործադրման դաշտի առանձնահատկությունները: Ամեն դեպքում վերափոխման էր ենթարկվում գործառող՝ թեկուզ և անբավարար արդյունավետությամբ, տնտեսական համակարգ: Իսկ համակարգի որպիսությունը որոշվում է ոչ միայն և ոչ այնքան դրա առանձին տարրերի, որքան դրա կառուցվածքի հատկանիշներով, համակարգին հատուկ միասնականացնող կապերով³: Այս իրողությունը ենթադրում էր վերափոխումների իրագործում համակարգին հատուկ կապերի գործադրմամբ, եթե, իհարկե, նպատակների մեջ չի մտնում համակարգի ամբողջական կործանումը: Այսինքն՝ պլանահրամանային տնտեսությունը սահուն և նվազագույն կորուստներով անհրաժեշտ էր վերափոխել ազատականի՝ իրեն բնորոշ կապերի, եղանակների և միջոցների՝ բնականաբար բռնի, գործադրմամբ: Հակառակ դեպքում ազատական՝ սկզբունքորեն հակադիր այլ համակարգին հատուկ միջոցների կիրառումը

³ Стен Садовский В. И. Основания общей теории систем. М., 1974, էջ 18:

հնարավոր է, որ ոչնչացնեն ոչ միայն համակարգը, այլև նրա առանձին բաղադրիչները: Ըստ էության այդպես էլ եղավ:

Այսպիսի մոտեցման անհրաժեշտության գաղափարը արտահայտվում էր նաև վերափոխումների մեկնարկից առաջ⁴: Բնականաբար նման տեսակետի կողմնակիցներն այժմ շատ ավելի են, քան բարեփոխումների սկզբում էին: Իսկ որ տարիներ շարունակ այն մնում էր հետևողականորեն անտեսված, պարտադրում է ընդունել, որ համակարգային փոփոխությունները խրախուսող և ուղղորդող համաշխարհային հզոր ուժերի առաջնային նպատակը կոմունիզմի կործանումն էր, ինչը, անկասկած, անհրաժեշտություն էր: Սրան հակառակ՝ վերափոխումներն իրականացնողները, հիմնականում առաջնորդվելով անձնական շահի դրդապատճառներով, մտահոգված էին շուկայական բարեփոխումների երևութականության ապահովմամբ, քան իրական վերափոխումներով: Իրողությունը սա է: Շուկայական վերափոխումների մեկնարկին հաջորդած քառորդ դարում իրագործված փոփոխությունները գործնականում անհնարին են դարձրել կոմունիստականի վերականգնումը՝ միաժամանակ չբացառելով այլ բռնատիրական համակարգի ստեղծման ուղղությամբ առանձին երկրների և սոցիալական խմբերի, թեև հեռանկարային տեսակետից անպտուղ, ջանքերի և միջոցների գործադրումը: Սա ևս իրողություն է, ուստի իրական բարեփոխումների կենսագործումը նույնքան արդիական է և ոչ պակաս հրատապ, քան ինստուևականների սկզբին էր: Այնպես որ, զուտ ճանաչողականից բացի, անցման օրինաչափությունների ուսումնասիրությունը շարունակում է պահպանել և բազմապատկել նաև իր կիրառական նշանակությունը:

Թե՛ վերջին հաշվով, թե՛ ամենօրյա փոփոխությունների իմաստով ցանկացած հասարակություն և նրա հիմքը հանդիսացող տնտեսական համակարգ անցումային են⁵: Հասարակությունները միշտ էլ գտնվում են շարժման մեջ՝ որպես կանոն ընթանալով տնտեսական առաջադիմության ու բարոյական կատարելագործման ճանապարհով: Այս գերակշռող միտումը չի բացառում նաև տնտեսությունների կործանումը և հասարակությունների հետընթացը դեպի վայրենություն:

Քանի որ յուրաքանչյուր հասարակություն տնտեսական, իրավական, քաղաքական, մշակութային, կրոնական, տեխնոլոգիական և այլ բաղադրիչների անհավանական բարդ համակցություն է, ուստի բավականին դժվար է, եթե ոչ անհնար, բավարար հստակությամբ մատնանշել դրա սկիզբը: Այդ բաղադրիչների մի մասը կարող է ձևավորված լինել նույնիսկ մինչև տվյալ հասարակական համակարգի սկզբնավորումը, մյուսները սկսեն կազմավորվել արդեն գործող համակարգի պայմաններում: Հասարակության՝ որպես համակարգի որպիսությունը որոշում են դրա բաղադրամասերը ամբողջականացնող կապերը վերջիններիս բնույթը առավել

⁴ Տե՛ս օրինակ՝ **Գ. Ս. Գալստյան**, Ազատական տնտեսության գինը, «Պայքար», 1995, № 1, էջ 14:

⁵ Տե՛ս **Է. Ա. Հարությունյան**, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000:

չափով, քան բուն բաղադրիչների հատկանիշները: Այլապես, կարող է պատրանք ստեղծվել, որ կապիտալիզմի՝ որպես զարգացած փոխանակային տնտեսության սկիզբ պետք է համարել առաջին առևտրային գործարքը: Կամ՝ նույն ոգով՝ կապիտալիզմի կենսագործունեությունը ապահովող ինստիտուտների ձևակարգված ստեղծումը պետք է նշանակի վարչահրամանային տնտեսությունից շուկայականին անցնելու ավարտ: Սա, իհարկե, իրականության աղավաղված պատկերացում կլինի, ինչը ոչնչով չի նպաստի հասարակական-տնտեսական առաջընթացին: Այսպիսով, եթե տվյալ տնտեսական համակարգը կազմող բաղադրիչների լինելու կամ չլինելու հանգամանքը հասարակական տարբեր կառուցվածքների (անվանենք դրանք արտադրատեղանակ, հասարակական-տնտեսական ֆորմացիա, տնտեսակարգ, տնտեսական աճի փուլ, թե այլ կերպ) սահմանազատումը բավականին խնդրահարույց է դարձնում, ապա երկրորդը՝ ամբողջականության սկզբունքը, անհամեմատ դյուրինացնում է հետազոտողի գործը: Ջարգացման անընդհատության խզման սահմանագծի բացահայտումը հնարավորություն է ստեղծում տարանջատելու տարբեր հասարակական-տնտեսական համակարգերը՝ առանձնացնելով անցումայինները:

Որքան էլ վերափոխումները համարվեն անցումային, և այդ զարգացումները լինեն ինքնաբուխ, կամ էլ հասարակության կողմից գիտակցաբար ուղղորդվող ու պլանավորված, միևնույնն է, պահանջում են պատմական որոշակի ժամանակահատված: Այստեղ ի հայտ է գալիս հետազոտողի և հատկապես տնտեսագետների համար արդեն ավանդական դարձած ժամանակահատվածի բնորոշման խնդիրը՝ որն է կարճը, և որը՝ երկարը:

Ներկայումս տնտեսագիտության մեջ կիրառվող հայտնի բաժանումների հիմքում ըստ էության դրված են տեխնոլոգիական չափանիշները՝ ժամանակահատվածը, որի ընթացքում ռեսուրսները փոփոխելի են, թե ոչ, գները մնում են կայուն, թե փոփոխվում են, առկա է մակրոտնտեսական հավասարակշռվածությունը կամ անհամասնությունը և այլն: Ընդ որում, տարբեր տնտեսական իրավիճակների համար այդ տևողությունները ևս տարբերվում են: Իսկ արդյոք այդ բաժանումը կիրառելի է տնտեսական համակարգի կենտրոնական օղակ հանդիսացող մարդ արարածի նկատմամբ: Որն է նրա համար կարճը, իսկ որը՝ երկարը: Եվ իսկապես. «Ով կարող է հավաստել, որ հավիտենական մի հաճույք կարող է հատուցել մարդկային տառապանքի մեկ վայրկյանը: Քրիստոսնյա չէր լինի նա, ով նման բան հաստատեր...»⁶: Այս ճշմարտությամբ առաջնորդվելու դեպքում ցանկացած ժամանակահատված երկարատև է: Բայց մյուս կողմից էլ՝ «Ոչ ոք այս լուսնի տակ հավերժ չի ապրելու»: Ուստի մեզ մնում է հաշտվել պայմանականությունների հետ և որպես տարանջատման հատկանիշ ընտրել հետազոտության առարկայի՝ տվյալ դեպքում տնտեսական համակարգի կենսագործունեության ամբողջական ժամանակամիջոցը՝ որպես երկար, կամ դրա առանձին փուլերը՝ որպես կարճ ժամանակահատվածներ:

⁶ Ա. Քամյու, Ժանտախտը, Եր., 1990, էջ 135:

Այն, որ աշխարհը միասնական է, և ճանաչողության նպատակով կատարվող սահմանազատումները աղավաղում են իրականությունը, ակնհայտ է: Սակայն ակնհայտ է նաև, որ առանց դասակարգումների գործնականում անհնար կդառնան այդ գործընթացների ուսումնասիրությունները, որոնց նպատակը բոլոր առումներով ի վերջո մեկն է՝ օժանդակություն սոցիալական հիմնախնդիրների լուծմանը: Ուստի անխուսափելի է դառնում նաև քաղաքական, անձնական և այլ շարժառիթների ազդեցությունը ուսումնասիրությունների ընթացքի և արդյունքների ձևակերպման վրա: Ենթադրելի է, որ այս իրողությունների գիտակցումը ինչ-որ չափով կարող է հետազոտողին զերծ պահել նման վտանգներից, բայց ոչ երբեք՝ ապահովագրել:

Առանց վիճարկելու նյութականի ու հոգևորի, տնտեսականի, պատմականի, իրավականի առաջնայնության, մեր համոզմամբ, սկզբունքային որոշակիացման չենթարկվող հիմնահարցի գոյություն ունեցող լուծումները, տնտեսական համակարգերի վերափոխման ընթացքի վերլուծության հիմքում մենք որպես գլխավոր հատկանիշ դնում ենք սեփական հիմքերի վրա ինքնավերարտադրվելու ունակությունը: Իհարկե, նման մոտեցում ապահովել հատկապես անցումային տնտեսական համակարգերի նկատմամբ շատ ավելի բարդ է, քանի որ դրանք ներառում են առաջին հայացքից ոչ համասեռ տարրեր: Այդ անհամասեռությունը պատճառ է նաև բազմազան գաղափարաբանական հիմքերից կատարվող եզրահանգումների:

Հասարակական և տնտեսական համակարգերի մինչ այժմ տեղի ունեցած հաջորդափոխությունները միշտ էլ ընդգրկել են քիչ թե շատ երկար որոշակի ժամանակահատվածներ և որպես կանոն ուղեկցվել են սոցիալական աղետներով ու տնտեսական զրկանքներով և կորուստներով (Անգլիա՝ 16-17-րդ դարեր, Ֆրանսիա՝ 18-ի դարավերջ, Ռուսական Կայսրություն՝ 20-րդ դարասկիզբ): Այսօրվա դիրքերից արդեն պարզ է, որ փոփոխությունները թեև իսկապես անհրաժեշտություն են եղել, բայց հայտնի հեղափոխությունները իրականում այդ վերափոխումների պատճառը չեն եղել, այլ ընդամենը սրություն են հաղորդել դրանց՝ զուգահեռաբար խորացնելով մարդկանց թշվառությունը՝ վերջին հաշվով դժվարացնելով հասարակության առաջընթացը: Ներկայումս ևս այդպես է և ամենայն հավանականությամբ այդպես կլինի նաև ապագայում:

Անցումը ավանդական հասարակությունից կապիտալիստական՝ շուկայական տնտեսությանը հիմնականում չալանավորված և չգիտակցված գործընթաց էր: Մասնավոր սեփականության վրա հիմնված և ազատ շուկայի պայմաններին կողմնորոշված կապիտալիստական հաստատությունների զարգացումը ինքնաբուխ էր: Եվ այս իմաստով ներկայիս վերափոխումները իրագործման եղանակների տեսանկյունից էապես առանձնանում են, ինչը, սակայն, հարցականի տակ չի կարող դնել դրանցում առկա օրինաչափությունների հնարավորությունը: Ուստի անցման տեսության առարկան այն ընդհանուրի բացահայտումն է, որն անկասկած գոյություն ունի:

Բանալի բառեր – *անցումային հասարակություն և տնտեսություն, տնտեսական համակարգ, անցման տեսություն, մեթոդաբանական սկզբունքներ*

ГАГИК ГАЛСТЯН – Введение в теорию переходной экономики. – В статье излагаются основополагающие методологические принципы исследования переходных обществ и их экономических систем, выявляются и определяются общие закономерности экономической трансформации.

Ключевые слова: *переходное общество и экономика, экономическая система, теория трансформации, методологические принципы*

GAGIK GALSTYAN – Introduction to the Theory of Transitional Economy. – The present article is an attempt to present the methodological principles of the investigation of transitional societies and their economic systems and it aims to reveal and define the general regularities of economic transformation.

Key words: *transitional society and economy, economic system, the theory of transformation, the main methodological principles*